ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

Քվեարկության նախորդ օր՝ 16 սեպտեմբերի 2023թ.

Մասնագետի գործողությունների հաջորդականություն

- ☐ Տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից ստանալ տեխնիկական սարքավորման ճամպրուկն՝ ըստ ստացականի մյուս պարագաները և ***աջակցման կենտրոնի անդամների հեռախոսահամարների*** թերթիկը:
- ☐ Ստուգել ճամպրուկում անհրաժեշտ պարագաների առկայությունը, տեխնիկական սարքավորման և պլաստիկ կապարակնիքի սերիական համարներն՝ ըստ ստացականի:
- ☐ Տեղադրել տեխնիկական սարքավորումը քվեարկության սենյակում այդ նպատակով հատկացված սեղանին:
- ☐ Տեղադրել թղթի գլանը տեխնիկական սարքավորման տպիչում:

- ☐ Միացնել տեխնիկական սարքավորումը հոսանքի աղբյուրին, համոզվել, որ տեխնիկական սարքավորումը լիցքավորվում է:



- ☐ Միացնել տեխնիկական սարքավորումը միացման-անջատման կոճակով:

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- ☐ Հանել ռաուտերը և UPS-ը, ռաուտերը միացնել UPS-ին՝ օգտագործելով ռաուտերի հոսանքի լարը:
- ☐ Միացնել տեխնիկական սարքավորումները ռաուտերին՝ օգտագործելով ցանցային լարերը:

- ☐ Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերի պարագայում առաջինն անջատիչով միացնել UPS-ը, ապա ռաուտերը և դրանից հետո նոր միայն տեխնիկական սարքավորումը:
- ☐ Բացել «Ընտրողների գրանցման համակարգ» ծրագիրը՝ սեղմելով նարնջագույն կոճակին:

- ☐ Ստուգել տեխնիկական սարքավորման ժամը և ամսաթիվը էկրանի ձախ անկյունում:

! Ուշադրություն՝

1. ***եթե ամսաթիվը կամ ժամը սխալ է, ապա***

➲ Մասնագետն անհապաղ կապ է հաստատում աջակցման կենտրոնի հետ, որպեսզի ստանա համապատասխան հատուկ կոդ տեխնիկական սարքավորման ամսաթիվը և/կամ ժամն ուղղելու նպատակով:

➲ Մասնագետը պարտավոր է հետևել աջակցման կենտրոնի աշխատակցի հրահանգներին և դրանք ճշգրտորեն կատարել:

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

2. Եթե ամսաթիվը և ժամը ճիշտ են, ապա

☐ Իրականացնել սարքավորման տվյալների ստուգում՝ ներմուծելով **111111** վեցանիշ կոդը և **Ձեր ընտրական տեղամասի համարը**: Ստուգել այդ տեղամասի տվյալները՝

- ✓ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը,
- ✓ տվյալ ընտրական տեղամասում քվեարկությունը նախատեսվում է մեկ, թե մեկից ավելի տեխնիկական սարքավորումներով:

Ներքին ցանցի նշանն ուղեկցվում է կանաչ կամ կարմիր նշաններով.

Կանաչ V-աձև նշան՝ սարքը *միացված է* ներքին ցանցին:

Կարմիր ! նշան՝ սարքը *միացված չէ* ներքին ցանցին:

! **Ուշադրություն՝** մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ ունեցող ընտրական տեղամասում պետք է ստուգել, թե արդյոք տեխնիկական սարքավորումը միացված է ներքին ցանցին:

✓ Ներքին ցանցի նշանը ուղեկցվում է կարմիր ! նշանով ***մեկ տեխնիկական սարքավորում*** ունեցող ընտրական տեղամասերում, քանի որ տեղամասում մեկ սարքավորում լինելու դեպքում այն աշխատում է առանձին ռեժիմով:

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

- ☐ Իրականացնել տպիչի ստուգում:
- ☐ Թողնել տպիչի ստուգման արդյունքում տպված կտրոնը տեխնիկական սարքավորման վրա:
  - ➲ Տպիչի ստուգման արդյունքում խնդիրներ ծագելու դեպքում անհապաղ կապ հաստատել աջակցման կենտրոնի հետ:

- ☐ Ստուգումից հետո սեղմել էկրանի վերևի աջ անկյունում գտնվող բացվող ցանկի կոճակը:

- ☐ Ընտրել «ԵԼՔ» տարբերակը և սեղմել «ԱՅՈ» հաստատելու համար գործողությունը:
- ☐ Սեղմած պահել սարքավորման անջատիչը (ոչ պակաս քան 5 վայրկյան) մինչև կհայտնվի էկրան՝ «ԱՆՋԱՏԵԼ» և «REBOOT» կոճակներով ու սեղմել **«ԱՆՋԱՏԵԼ»** կոճակը:
- ☐ Անջատել տեխնիկական սարքավորումը անջատիչով, սակայն թողնել միացված հոսանքի սնուցման աղբյուրից:

  - ➲ **ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ՝** անջատել UPS-ը և ռաուտերը անջատիչով, սակայն UPS-ը թողնել միացված հոսանքի սնուցման աղբյուրից:

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

Քվեարկության օր՝ 17 սեպտեմբերի 2023թ.

Մասնագետի գործողությունների հաջորդականություն ***Ժամը 7:00-ից 8:00***

- ☐ Ստուգել տեխնիկական սարքավորման կոմպլեկտի ամբողջակա-նությունը:
- ☐ Ստուգել պլաստիկ կապարակնիքի վնասված չլինելը և լարային միացումները:
- ☐ Միացնել տեխնիկական սարքավորումը:
- ☐ Ստանալ մասնագետի կոդը պարունակող ծրարը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից:
- ☐ Մուտք գործել ընտրողների գրանցման ծրագիր՝ սեղմելով տեխնիկական սարքավորման էկրանի վերևի ձախ անկյունում գտնվող «VIU-Client» նարնջագույն նշանը:
- ☐ Ստուգել տեխնիկական սարքավորման ժամը և ամսաթիվը էկրանի ձախ անկյունում:
  - ❗ ամսաթվի կամ ժամի սխալի դեպքում անհապաղ կապ հաստատել աջակցման կենտրոնի հետ:
- ☐ **Ակտիվացնել տեխնիկական սարքավորումը՝ ներմուծելով 222222** վեցանիշ կոդը և Ձեր ընտրական տեղամասի համարը: Կրկին ստուգել այդ տեղամասի տվյալները՝
  - ✓ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը,
  - ✓ տվյալ ընտրական տեղամասում քվեարկությունը նախատեսվում է մեկ, թե մեկից ավելի տեխնիկական սարքավորումներով,
  - ❗ մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ ունեցող ընտրական տեղամասում կրկին ստուգել, թե արդյոք տեխնիկական սարքավորումները միացված են ներքին ցանցին:
- ☐ Սեղմել «**ԱՅՈ**» կոճակը, եթե էկրանին հայտնված տեղեկությունները ճիշտ են:

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

- ☐ Սեղմել «**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**» կոճակը և էկրանին կհայտնվի ծանուցում «Ընտրական տեղամասի ցուցակն ակտիվացված է»:
- ☐ Մուտքագրել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից ստացված ծրարում առկա մասնագետի վեցանիշ կոդը:
- ☐ Ստանալ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությունը՝ գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը տպելու համար:
- ☐ Հեռացնել տպիչի ստուգման արդյունքում տպված կտրոնը:
- ☐ Տպել գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը:
- ☐ Հանձնել տեղեկանքը հանձնաժողովի նախագահին:
- ☐ Հայտնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և տեխնիկական աջակցության կենտրոնին տվյալների ստուգման գործընթացի հաջող ավարտի մասին: Խնդիրների դեպքում տեղյակ պահել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և զանգահարել տեխնիկական աջակցության կենտրոն:

ՍՏՈՒԳՄԱՆ, ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԿՈԴԵՐ

Քվեարկության նախորդ օրը՝ մուտքագրել ստուգման վեցանիշ կոդը	**111111**
Քվեարկութան օրը՝ սկզբից մուտքագրել ակտիվացման վեցանիշ կոդը	**222222**
Քվեարկության օրը, ակտիվացումից հետո՝ մուտքագրել մասնագետի վեցանիշ կոդը	**առկա է մասնագետի կոդը պարունակող ծրարում**

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

Ժամը 8:00-ից սկսած

☐ Սեղմել «**ՍԿՍԵԼ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ**» կոճակը՝ ժամը 8:00-ին:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ԳՐԱՆՑԵԼԻՍ՝

☐ Ստանալ ընտրողից անձը հաստատող փաստաթուղթը (միայն բնօրինակը):

☐ Ստուգել ընտրողի ինքնությունը՝ համոզվելով, որ ներկայացված անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկարը համապատասխանում է ընտրողին:

☐ Ներմուծել փաստաթուղթը սարքավորման մեջ կամ անհրաժեշտության դեպքում մուտքագրել տվյալները ստեղնաշարով:

☐ Ապահովել ընտրողի մատնահետքի ներմուծումը և տպած քվեարկության կտրոնը տալ ընտրողին

- ! **Ուշադրություն՝** քվեարկության օրը կազմված լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար **ԸՆՏՐՈՂՆ** անձը հատատող փաստաթղթի հետ **պետք է ներկայացնի նաև համապատասխան տեղեկանք** (այն առանց լուսանկարի է):


N_____
«____» _____ 20 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԱԶՄՎՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____
անուն, հայրանուն, ազգանուն

Անձը հաստատող փաստաթուղթ _____
տեսակ, համար

հաշվառված _____
հասցեատիպ և հասցե

դուրս է մնացել թիվ _____ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը՝

_____ -ին
անուն, հայրանուն, ազգանուն

ընդգրկել _____ թիվ _____ ընտրական տեղամասի
նշման է հանձնվող անվանումը՝ ՏԻՄ թաղամասի գեղեցիկ

ընտրողների լրացուցիչ ցուցակում:

Ներկայացվում է տեղամասային ընտրական հանձնաժողով:

_____
(ընտրող ստորագրի հանձնաժողովի ստորագրահանձնման գրկնվածի անուն, ազգանուն)
Կ.Տ.

(ստորագրություն)

«____» _____ 20 թվական

- ! Խնդրեք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին Ձեզ ցույց տալ նշված տեղեկանքը:
- ! Միայն նշված տեղեկանքի առկայության դեպքում է, որ ընտրողին պետք է գրանցել լրացուցիչ ցուցակում:

- ! **Ուշադրություն՝** ընտրողին լրացուցիչ ցուցակով գրանցելուց առաջ անձը հաստատող փաստաթուղթը մեկ անգամ ևս ներմուծել սարքավորման մեջ կամ անհրաժեշտության դեպքում մուտքագրել տվյալները ստեղնաշարով:

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

Քվեարկության ավարտից հետո

- ☐ Սեղմել գլխավոր էջի տնակի տեսքով կոճակը:



- ☐ Սեղմել «ՓԱԿԵԼ» կոճակը:
- ☐ Տպել ավարտական տեղեկանքը և հանձնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- ☐ Սեղմել «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ» կոճակը և տպել ավարտական տեղեկանքի օրինակներ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:
- ☐ Սեղմել սարքավորման վերևի աջ անկյունում գտնվող բացվող ցանկի կոճակը, ընտրել «ԵԼՔ» տարբերակը, հետո՝ «ԱՆՋԱՏԵԼ» կոճակը:
- ☐ Դասավորել տեխնիկական սարքավորման կոմպլեկտը ճամպրուկում և հավաքել մյուս պարագաները (առկայության դեպքում՝ ռաուտերը, UPS-ը ցանցային լարերը ևս դասավորել իրենց տուփերում):
- ☐ Հանձնել տեխնիկական սարքավորման ճամպրուկը և մյուս պարագաները տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին՝ հանձնման ստացականը ստորագրելու միջոցով:

! Եթե քվեարկության օրը տեխնիկական սարքավորումը կամ այլ սարք խափանվել է, ապա այդ մասին նշել առանձին թղթի վրա, որը սարքավորման հետ միասին դրվում է ճամպրուկի (կամ այլ սարքերի դեպքում իրենց տուփերի) մեջ:

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ

- **Մասնագետը չի ստուգում ներկայացված փաստաթղթի վավերականության ժամկետը, քանի որ դա արվում է տեխնիկական սարքավորման միջոցով:**
- **Ընտրությունների ժամանակ դիվանագիտական անձնագրերը չեն ընդունվում որպես անձը հաստատող փաստաթղթեր:**

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԵՆ՝

✓ ***ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐԸ***

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

✓ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԸ (ID ՔԱՐՏ)

✓ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ (ԲԻՈՄԵՏՐԻԿ) ԱՆՁՆԱԳԻՐԸ



Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

✓ ***անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը տրված ոստիկանության կողմից,***



Հավելված N 3
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 5-ի N 411-Ն որոշման

_____
(ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայություն)

_____ _____ 20 թ.

000151001

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԿԱՅԱԿԱՆ N_____

Քաղ. _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը)

_____
(հանրային ծառայությունների համարանիշը)

տրվել է նույնականացման քարտի փոխանակման (կորստի, վավերականության ժամկետը լրանալու) կապակցությամբ կամ ազատազրկման դատապարտված անձի դիմումի հիման վրա (ընդգծել)

_____ _____ 20 թ.-ին:

(լուսանկար)

Վկայականն ուժի մեջ է մինչև _____ _____ 20 թ.

Անձնագրային ծառայության պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)



_____
(ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայություն)

«____» _____ 20 թ. _____
(տրման ամսաթիվը) (դիմումի մուտքի համարը)

AP055004

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՏՐՎՈՂ՝ ԱՆՁԸ (ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Քաղ. _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը)

_____
(հաշվառման հասցեն)

Տրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու կապակցությամբ անձի դիմումի հիման վրա (ընդգծել):

Կ. Տ

Փաստաթուղթն ուժի մեջ է մինչև «____» _____ 20 թ.

Անձնագրային ծառայության պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

✓ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԸ

✓ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԸ,



Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

✓ ***ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐԸ,***

✓ ***ԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ,***





Մասնագետի գործառույթների Հուշաթերթ

✓ ***ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ,***

✓ ***ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ՝ փվյալ համայնքի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ նշումով:***